Ռափայել Պատկանյան

Ո՛չ խնդիր, ո՛չ հրաման

Ի՞նչ է, հայերիս նորե՞ն մոռացար,
Ոսոխքդ ուրեմն ճըշմարիտ կասեն,
Որ «Թուրքը կույր է, խուլ է ու համառ,
Շնորհ ու գութ հայերն իզուր կըսպասեն»:

Տաճի՛կ՝ պատրանքը քեզ թույլ ասպար է,
Պատրելով կերթաս, բայց ետ չես դառնալ .
Մի՛ սփոփիլ քեզի, որ հայն տըկար է,
Քու լըծեն հեշտ է մեկ հրացան բառնալ:

Չեռնյան մեկ ռուս ցնցեց քու գահը,
Իգնատև՝ կարգըդ տակն ու վրա արավ,
Հայերուս ձեռքն է քու կյանքն ու մահը
(Փողիդ հետ մի՞թե խելքըդ ա՞լ կորավ):

Եռսուն հազար զենք ունի զեյթունցին,
Որ կարժե քուկիդ հարուր հազարին,
Արցախեն կուգա մեր քաջ այրուձին՝
Հիշեցնել օրերն Կարմիր Վարդանին . . .

Հայքըս դանդաղ ենք, բայց դեռ մեռած չենք,
Համբերատար ենք, և ո՛չ թե հիմար .
Թե այսքան ձըրի քեզ ծառայել ենք,

Կսպասենք քեզմեն վրճիռրդ արդար:

Կարծեմ ողջը մեկ է քեզի համար,
Որ հայք ձախե աջ կրխաչակրնքեն,
Ուրեմրն ինչո՞ւ Սլավին հավասար
Հայք պիտի չառնուն շրնորհք քու ձեռքեն:

Մեզ ի՞նչ է պակաս մեկ ազգ կազմելու
(Ախ, քեն ու նախանձ չէ՛ փաստ անաչառ)
Բարեկիրթ ազգաց կարգը կանգնելու . . .
Թուրք, մի՞թե այդկից քեզ վրնաս տեսար:

Թո՛ւրք, լավ պահպանե դու հայոց ազգին,
Նա քարե պատ է քեզ, ոչ թրշնամի .
Վաղ կամ ուշ Հայքը ոտքի պիտ կանգնին .
Բայց վա՛յ քեզ, թե այդ առանց քեզ լինի:

Թե թուր վերցնեինք՝ մեզ պիտ մորթեին .
Ոչ ոք պիտ ելներ պաշտպան խեղճ հային .
Երբոր լուռ կեցանք մենք խոհեմաբար,
Ասին . «Մեռել եք հոգեպես իսպառ»:

Ի՞նչ անենք ուրեմն, ինչպե՞ս փրրկրվինք,
Մեզ հալածողեն մենք որտե՞ղ փախչինք,
Հայության անվան խարանած կրնիք,
Հայի ճակատին կոխել են մարդիկ:

Վեց հարյուր տարի մենք կիսակենդան՝
Կրսողանք տրորած ճրճուի նրման,
Փոխան շիջելու նախանձը մարդոց՝
Սաստկացավ, ավա՛ղ, զերդ հրրդեհ ու բոց:

Կուզեն որ հայքրս մեր սուրբ հավատքեն

Հրաժարվինք, ինչպես մահացու մեղքեն,
Մեր լեզուն, մեր ծեսք՝ նըշանք ազգության,
Երբեք չըհիշվին ի մեջ մարդկության:

Կըրնա՞ս ուրանալ ես իմ պապերուս,
«Մորդ ատե՛» խրատել հարազատ որդուս,
Իմ ձեռքով պըղծել իմ սուրբ ավազան,
Ազգուրացն, ասե՛ք, չէ՞ վայրի գազան:

Ինպե՞ս կըկըրնամ ես տալ մոռացման
Քո սուրբ հիշատակն, Մամիկոն Վարդան:
Ո՞ր ազգի պատմիչք չորս-հինգ հատ ցուցին
Նըման մեր անմահ Ղևոնդ Երեցին:

Չէ՛, անհընար է ազգեն հրաժարվել,
Ինչպես որ միսը ոսկորեն բաժնել .
Սինլրքոր կըմնամ, ըստոր ու ատած,
Բայց ես չեմ լինիլ երբեք ազգուրաց: